ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX դ. առաջին կես)

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

XIX դարասկզբին Արևելյան Հայաստանի հյուսիսային հատվածի միացումը Ռուսաստանին խոշոր իրադարձություն էր, որը նոր էջ բացեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ: Միավորումը վերացրեց արևելահայության այդ հատվածի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը՝ հետայդու ապահովելով հայ բնակչության աճ: Սկսվեց ազգահավաքման ու ազգային համախմբման մի գործընթաց, որում թուրք-քրդական լծի տակ դարեր շարունակ տառապող արևմտահայությունն ունեցավ իր ուրույն դերակատարությունը[1]:

1806 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմը սկիզբ դրեց արևմտահայության ներգաղթին դեպի նորանվաճ ռուսական տիրույթներ: Արդեն 1807 թ. մարտի 25-ից մինչև ապրիլի 6-ն ընկած ժամանակահատվածում, երբ ռուսական զորքերը գեներալ Նեսվետանի գլխավորությամբ առաջին անգամ փորձեցին գրավել Կարսի բերդը, 1200 ընտանիքներ

---

[1] *Մինչխորհրդային, խորհրդային և արդի շրջաններում այդ խնդրին անդրադարձել են՝ Գ. Ա ղ ա ն ե ա ն ց. Կարնո գաղթը (1829–1830), Թիֆլիս, 1891, Ա լ. Ե ր ի ց յ ա ն. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, Ե. Գ ե ղ ա մ յ ա ն ց. Պատմական քաղվածքներ, պրակ 3, մաս 1, Բաքու, 1909, Կ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին.– ՊԲՀ, 1974, -2, էջ 91–100,* С. Г л и н к а. Описание переселения армян аддербиджанских в пределах России. М., 1831; Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом и финансовом отношениях, ч. 2. СПб., 1836; В. П о т т о. Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, вып. 4. СПб., 1887; К. Б о р о з д и н. Переселенцы в Закавказье. СПб., 1891; А. Г р и б о е д о в. Полное собрание сочинений, т. 3. СПб., 1917; *Մ. Դ ա ր բ ի ն յ ա ն. Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1829–1830 թթ. գաղթի պատմությունից.– Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1973, -2, էջ 212–216, նույնի՝ Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828–1830 թթ. գաղթի վերաբերյալ.– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև ԲՀԱ), 1973, -2, էջ 135–143, նույնի՝* Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг.– *ՀՊ², 1977, -3, էջ 3–24; Ե. Մ ա ն ո ւ կ յ ա ն. Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին–30-ական թվականների սկզբներին.– Ատենախոսություն պատմական գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 1991, Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, նույնի՝ Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2006, Հ. Ա մ ի ր ջ ա ն յ ա ն. Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին, Երևան, 2010, Ա. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:*

տեղափոխվեցին Փամբակ-Շորագյալի ուղեմաս[2]: Եվս 520 ընտանիքներ (3111 մարդ)՝ մեծ մասամբ հայեր, իրենց ունեցվածքով, անասուններով, վաճառքի ու ցանքսի համար անհրաժեշտ պարենով, Կարսի շրջակա գյուղերից տեղահանվեցին և ուղեմասում վերաբնակեցվեցին ապրիլի 20–22-ի ընթացքում՝ կապված Էրզրումի սերասկյար Յուսուֆ փաշայի հարձակման հետ[3]: 1807 թ. երկրորդ կեսին Կարսի փաշայության տարածքից Փամբակ-Շորագյալի ուղեմաս ներգաղթեց ևս 173 ընտանիք (940 մարդ), որից 21 ընտանիք (95 մարդ) հաստատվեց Մեծ Ղարաքիլիսա գյուղում, 8 (41 մարդ)՝ Համամլիում, 58 (350 մարդ)՝ Բեքանդում, 45 (271 մարդ)՝ Փոքր Ղարաքիլիսայում, իսկ 41 (183 մարդ)՝ Գյումրիում[4]:

Արևմտահայերի գաղթը Կարսի և Ախալցխայի փաշայություններից Փամբակ-Շորագյալի ուղեմաս շարունակվեց նաև հաջորդ տարիներին: Կովկասի կառավարչապետ մարկիզ Ֆ. Պաուլուչչիի 1810–1812 թթ. զեկուցագրերի համաձայն՝ երկու տարվա ընթացքում ուղեմասի գյուղերում հաստատվել էր թուրքահպատակ 278 ընտանիք, այդ թվում՝ 100 ընտանիք թաթար[5] և 178 ընտանիք հայ կաթոլիկ[6]:

Ներգաղթը չդադարեց նույնիսկ 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, չնայած որ 1812 թ. Բուխարեստի պայմանագրով երկուստեք հպատակների ազատ երթևեկության իրավունքն արգելվում էր[7]: Այնպես որ, Կարսի Մահմադ փաշան ստիպված եղավ 1814 թ. գեներալ Նիկոլայ Ֆյոդորովիչ Ռտիշչևից հետ պահանջել իր փաշայության նախկին բնակիչներին: Ըստ ռուսական պաշտոնական փաստաթղթերի՝ այդպիսիք կազմում էին 603 ընտանիք, որից 290-ը հաստատվել էր Փամբակ-Շորագյալի ուղեմասում, այդ թվում՝ Մեծ Ղարաքիլիսայում 110 ընտանիք, Գյումրիում՝ 20, Բեքանդում՝ 50, Համամլիում՝ 10, Փոքր Ղարաքիլիսայում՝ 20, Լոռիում՝ 60, Ուզունլարում՝ 6, Ճոճկանում՝ 14[8]: Թուրքական կողմի պահանջը Փամբակի և Շորագյալի գյուղերում հաստատված կարսեցիներին հաղորդվեց, սակայն ըստ գեներալ-մայոր Ֆյոդոր Ֆիլիպովիչ Սիմոնովիչի 1815 թ. մարտի 20-ի գեներալ Ռտիշչևին ներկայացրած զեկուցագրի՝ վերադառնալու ցանկություն հայտնեց միայն 37 ընտանիք[9]: Դրան հակառակ՝ 1817 թ. Բայազետի փաշայության Կարասու գյուղից Խորագյալի գավառի Քյավթառլի գյուղ տեղափոխվեց 12 ընտանիք[10], իսկ 23 ընտանիք (158 մարդ) չոբանքյարայցիներ էլ ավագներ Խալիլ

---

[2] *Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. -6517, ¿з 2,* Акты собранные Кавказской Археографической Комиссией (далее – АКАК), т. 3. Тифлис, 1869, с. 600.

[3] АКАК, т. 3, с. 614.

[4] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22ա, վավ. 86:*

[5] АКАК, т. 5, 1873, с. 18.

[6] АКАК, т. 4, 1870, с. 24–25.

[7] Договоры России с Востоком. Политические и торговые, сост. и изд. Т. Юзефович. СПб., 1869, с. 49–58.

[8] *Հ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 141:*

[9] АКАК, т. 5, с. 816.

[10] *Տեղագրական պատառիկներ, Արևելյան մասն Շիրակայ.– «Արևելյան մամուլ» (Զմյուռնիա), 1. XII. 1898, էջ 890, Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին.– «Իրան-Նամե», 1998, -1-3, էջ 15:*

աղայի և Մամադ-Հասան աղայի գլխավորությամբ 1819 թ. հաստատվեցին տեղամասի Ջաջուռ գյուղում[11]:

Թուրքիայից, մանավանդ Կարսի փաշայությունից դեպի Փամբակ և Շորագյալ հայերի ներգաղթը նոր թափ ստացավ 1822 թ., երբ պարսկական 12000-ոց բանակը պաշարեց Կարսը: Ըստ չափաբերական մի մատյանի՝ Շորագյալի միայն Փոքր Ղարաքիլիսա գյուղում 1822 թ. դրությամբ կային Կարսի նահանգի Փարգիտ, Ղարախան, Ջոմուշլու, Քեչեբորք, Բաշ Շորագյալ, Համզաքյարաք, Ճալա, Ծպնի, Տիկոր, Տիկնիս գյուղերից և Կարս քաղաքից գաղթած հայեր: Նույն պատկերն էր նաև Շորագյալի Հոռում, Ղալթախչի և Ղշլաղ գյուղերում[12]: 500 ընտանիք արևմտահայեր տեղավորվել էին Գյումրիում, իսկ մնացածը՝ Շորագյալում և Լոռիում[13]: Եվս 500 ընտանիք՝ հիմնականում հայ կաթոլիկներ, Փամբակ-Շորագյալի ուղեմաս գաղթեցին 1823 թ.: Սրանցից 368-ը հաստատվեց Շորագյալի տեղամասի Ղափլի, Քյափանակ և Քյաֆթառլի գյուղերում, իսկ մնացած 132-ը՝ Փամբակի Շահնազար և Գոգարան գյուղերում[14]: Հ. Լազարյանին գրած մի նամակում Ն. Աշտարակեցին այդ կապակցությամբ գրում էր. «...նկատելի է թէ յորպիսի հեծութիւնիս կայցեն առ հասարակ և բարեպաշտ համարեալ լինին, որք մազապուրծ զանձինս և զընտանիս զօրեն արկանել մերկ ու բոկ ընդ հովանեաւ դրօշակի իւրոյ կայսէրական մեծութեան ամենայն ռուսաց ի Շիրակ գաւառ...»[15]:

1823 թ. միաժամանակ վերջ դրվեց դեպի ռուսական տիրույթներ արևմտահայերի ներգաղթին: Երկու ոչ լրիվ տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից և մանավանդ Կարսի փաշայությունից գաղթեցին ու Փամբակ-Շորագյալի ուղեմասում հաստատվեցին նվազագույնը 3500 ընտանիք: Դժբախտաբար, նույն ժամանակահատվածում անընդհատ շարունակվող ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, ավերածությունները, թալանը, սովն ու համաճարակային հիվանդությունները բացասաբար անդրադարձան Արևելյան Հայաստանի և, մասնավորապես, նրա հյուսիսային հատվածի ժողովրդագրական պատկերի վրա՝ հնարավորություն չտալով ներգաղթած արևմտահայությանը դրական լուրջ ազդեցություն ունենալու երկրամասի բնակչության թվական աճի և հատկապես կրոնական պատկերի վրա:

Ռուսական կայսրության հետ միավորմանը հաջորդած առաջին տասնամյակում տեղի ունեցավ ուղեմասի բնակչության թվի կտրուկ նվազում, որը շարունակվեց մինչև 1817 թ. և խուճապային տրամադրություններ ծնեց ռուսական բարձրաստիճան զինվորականության շրջանում: 1811 թ. սեպտեմբերի 30-ին գեներալ - մայոր Ստալ Բ-ը Կովկասի կառավարչապետ

[11] Присоединение Восточной Армении к России. Сборник документов, т. 2. Ереван, 1978, док. 43, с. 67–68.

[12] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 43, վավ. 298բ, թղթ. 46, վավ. 249:*

[13] *Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը..., էջ 127:*

[14] АКАК, т. 6, ч. 1, 1874, с. 466–467.

[15] *ՄՄ, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, թ. 2-3:*

մարկիզ Ֆ. Պաուլուչչիին ներկայացրած զեկուցագրում գրում էր, թե երկարատև պատերազմների պատճառով Փամբակի և Շորագյալի տեղամասերը մարդաթափ են եղել, բնակչության մեծ մասն արտագաղթել է, շատերին գերի են տարել, և այժմ այդ երկու շրջաններում կա ընդամենը 500 ընտանիք[16]: Բնակչության թվի հետզհետե նվազումը Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատարությանը նույնիսկ հաշտեցրեց այն մտքի հետ, թե արժե ամայի ու անմարդաբնակ ուղեմասը վերադարձնել պարսիկներին[17]: Բարեբախտաբար, ուղեմասի ռազմաստրատեգիական դիրքն ու անընդհատ շարունակվող արևմտահայության ներհոսքը իշխանություններին հետ պահեցին ճակատագրական այդ քայլից:

Արդյունքում, XIX դ. առաջին քառորդին արևմտահայության՝ պարբերաբար կրկնվող ներգաղթի շնորհիվ Փամբակ-Շորագյալի ուղեմասը, ի տարբերություն Արևելյան Հայաստանի այլ շրջանների, մնաց ոչ միայն բնակեցված, այլև պահպանեց իր հայեցի դեմքը. 1824–1825 թթ. ուղեմասն ուներ 1465 ընտանիք ազգաբնակչություն (1076 ընտանիք՝ 74 %-ը հայեր էին, իսկ 389 ընտանիք կամ 26 %-ը՝ թաթարներ)[18], ինչը 1805 թ. ցուցանիշից՝ 1322 ընտանիքից (որից հայեր էին 1061 ընտանիք կամ 80,3 %-ը, իսկ այլազգիներ՝ 261 ընտանիք կամ 19,7 %-ը)[19], 143-ով ավելի էր:

Դրությունն էականորեն փոխվեց XIX դ. 20-ական թվականների վերջերին, երբ հաջողությամբ ավարտված ռուս-թուրքական պատերազմի արդյունքում կնքված Ադրիանապոլսի պայմանագրով ավելի քան 12400 արևմտահայ ընտանիք անցան ռուս-թուրքական սահմանն ու հաստատվեցին Արևելյան Հայաստանի տարածքում: Սրանց մի մասը՝ մոտ 4100 ընտանիք, տեղավորվեց Փամբակ-Շորագյալի ուղեմասում: Նորեկները համեմատաբար փոքր թիվ կազմեցին Փամբակում՝ շուրջ 6-700 ընտանիք, որ հաստատվեցին տեղամասի 14 գյուղերում, ընդ որում դրանցից 5-ը (Ղարաբոյա, Ղալթախչի, Ղարալ, Ղաչաղան, Նալբանդ) հիմնեցին, իսկ մյուս 9-ում (Մեծ Ղարաքիլիսա, Մեծ Բեքանդ, Ավդիբեկ, Աղբուլաղ, Գյուլլիջա, Ղշլաղ, Համամլի, Վարդնով) տեղավորվեցին փամբակցիների հետ[20]: Անհամեմատ ավելի մեծ թիվ կազմեցին արևմտահայերը Շորագյալի տեղամասում՝ շուրջ 3480 ընտանիք: Սրանց մի մասը՝ 1250 ընտանիք (600 ընտանիք կարսեցիներ, 200 ընտանիք էրզրումցիներ, մոտ 300 ընտանիք բայազետցիներ, 30–40 ընտանիք բոշաներ և մոտ 100–120 ընտանիք էլ բասենցիներ ու մշեցիներ), հաստատվեց Գյումրիում և դարձավ 1837 թ. հիմնված Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչության կորիզը[21]: Մնացած

---

[16] АКАК, т. 5, с. 115.

[17] АКАК, т. 5, ч. 2, 1875, с. 142.

[18] М. Е. К о ц е б у. Описание вторжения персиян в Грузию в 1826 г.– Кавказский сборник, т. XXII. Тифлис, 1901, с. 19.

[19] *Խ. Հ. Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն. Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917 թթ.), Երևան, 1959, էջ 17:*

[20] *Բամպակաձոր.– «Արևելյան մամուլ», 15. IV. 1896, էջ 234-235, 1. V. 1896, էջ 267-269, 10. V. 1896, էջ 292-294:*

[21] *Ս. Թ ա մ բ ա զ յ ա ն. Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938 թ.), ձեռագիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ 103, Թամբազյանի նյութեր, տետր 1, Կ. Մ ա տ ի - ն ե ա ն ց. Ալեքսանդրապոլի վաճառականները.– «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), 2. II. 1874, էջ 3:*

2230 ընտանիքները տեղավորվեցին տեղամասի գյուղերում՝ դրանց թիվը 20-ից հասցնելով 76-ի: Այդ թվում՝ 41 գյուղերում արևմտահայերը հաստատվեցին Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի տարբեր շրջաններից գաղթածների հետ, իսկ 34-ը հիմնեցին սեփական ուժերով (20 գյուղերում տեղավորվեցին միայն կարսեցիներ, 2-ում՝ բայազետցիներ, 1-ում՝ մշեցիներ, իսկ 11-ում՝ էրզրումցիներ)[22]: Ցավոք, ժամանակին ռուս պաշտոնյաների կողմից սեփական պարտականություններն անբարեխղճորեն կատարելու, այն է՝ գաղթականների ընդունման ու տեղավորման ընթացքում նորեկներին և բնիկներին առանձին-առանձին չհաշվառելու արդյունքում՝ այսօր մենք չենք կարող ստույգ իմանալ ոչ Փամբակ-Շորագյալի ուղեմաս գաղթածների ճշգրիտ թիվը և ոչ էլ նշել, թե Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջանից քանի ընտանիք է հաստատվել այստեղ:

Արևմտահայության այս նոր ներգաղթի շնորհիվ ազգաբնակչության թիվը Փամբակ-Շորագյալի ուղեմասում հասավ 5257 ընտանիքի, որից 1350 ընտանիք բնակվում էր միայն Գյումրիում (այստեղ բնակչության 96 %-ը կամ 1296 ընտանիք հայեր էին, մահմեդականներ՝ 3 %-ը կամ 40 ընտանիք, իսկ հույներ՝ միայն 1 %-ը կամ 14 ընտանիք)[23], իսկ մնացած 3907 ընտանիքը՝ ուղեմասի 113 գյուղերում (այդ թվում 3706 ընտանիք, որ կազմում է գյուղաբնակների 94,8 %-ը՝ հայեր էին, իսկ 201 ընտանիքը կամ գյուղաբնակների 5,2 %-ը՝ մահմեդականներ): Ներգաղթից անմիջապես հետո՝ 1832 թ. անցկացված կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ ուղեմասի ընդհանուր բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 5002 ընտանիքը կամ 95 %-ը՝ հայեր էին, 241 ընտանիքը կամ 4,6 %-ը՝ մահմեդական, իսկ 14 ընտանիքը կամ 0,4 %-ը՝ հույն[24]:

Հայահավաքման գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ ըստ պաշտոնական տվյալների շուրջ 459 գաղթական ընտանիք չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղթի ճամփան ու այս անգամ էլ հաստատվեցին Փամբակ-Շորագյալի ուղեմասում[25]:

---

[22] *Տեղագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակայ.– «Արևելյան մամուլ», 1. VIII. 1898, 15. VIII. 1898, 1. IX. 1898, 15. IX. 1898, 1. X. 1898, 15. XI. 1898, 1. XII. 1898, 15. XII. 1898, 1. X. 1898, 1. II. 1899, 1. III. 1899, Ա. Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 85-113:*

[23] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 93, ց. 1, գ. 83, 84:*

[24] *Նույն տեղում, գ. 82, 85, 86, 87: Փաստաթուղթը թվագրված է 1842 թ., սակայն աշխարհագիրն անցկացվել է ավելի վաղ: Ուղղակի 1842 թ. առաջ կատարվել է «Կամերալ ցուցակագրման վերստուգում», որի արդյունքները, հատոր առ հատոր հավաքվելով, 1842 թ. կազմվել են ու հանձնվել Երևանի արքունական պալատ: Ավելին՝ փաստաթուղթն ունի երկու վերնագիր՝* «Проверка камерального описания Шурагельского участка Александрапольцкого уезда Грузино-Имеретинской губернии, составленная в 1842 году» ¨ «О Турецких переселенцах», *միաժամանակ տրված է Փամբակ-Շորագյալի ուղեմասի 1832 թ. և նրա հիմքի վրա ստեղծված Ալեքսանդրապոլի գավառի 1842 թ. ժողովրդագրական վիճակը:*

[25] *Զ. Կ ո ր կ ո տ յ ա ն. Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Երևան, 1932, էջ XXIX-XXX:*

Մեր կարծիքով՝ 1830-ական թվականների կեսերին գրանցված այս նոր ներգաղթն ընդունել է շատ ավելի մեծ մասշտաբներ, որովհետև 1842 թ. «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն՝ XIX դ. 30-ական թվականների վերջին ուղեմասը նախկին 5257-ի փոխարեն ուներ արդեն 6353 ընտանիք բնակչություն: XIX դ. առաջին երեսնամյակի ժողովրդագրական վիճակին վերաբերող սկզբնաղբյուրների և հատկապես արխիվային վիճակագրական նյութի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1832–1842 թթ. ընթացքում Փամբակ-Շորագյալի ուղեմաս (1840 թ. ապրիլի 10-ից Ալեքսանդրապոլի գավառ) ընդհանուր առմամբ գաղթել է շուրջ 932 ընտանիք, որից 876-ը արևմտահայեր: Նորեկները տեղաբաշխվել են հետևյալ կերպ. 306 ընտանիք հաստատվել է Ալեքսանդրապոլ քաղաքում, մնացած 570 ընտանիք՝ ուղեմասի 54 գյուղերում. այդ թվում 286 ընտանիք՝ Շորագյալի տեղամասի 26 գյուղերում, իսկ 284 ընտանիք՝ Փամբակում, այստեղ գյուղերի թիվը 37-ից հասցնելով 48-ի[26]:

Բնակչության թվի արհեստական աճը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում: 1820–1830-ական թվականների զանգվածային գաղթերից անմիջապես հետո սկսվեց ներգաղթի մի նոր փուլ, որի արդյունքում մինչև 1850 թ. շուրջ 218 ընտանիք Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից գաղթեցին և հաստատվեցին նորաստեղծ Ալեքսանդրապոլի գավառում: Նորեկներից 23 ընտանիք հաստատվեց Ալեքսանդրապոլում, իսկ 195 ընտանիք՝ գավառի 60 գյուղերում (Շորագյալի 44 և Փամբակի 16 գյուղերում):

Այժմ կատարենք XIX դ. առաջին կեսի ընթացքում արևմտահայության անընդհատ շարունակվող ներգաղթերի, ինչպես նաև գաղթականության տեղաբաշխման ու Արևելյան Հայաստանի հյուսիսային հատվածի բնակչության էթնիկակրոնական պատկերի վրա գաղթերի թողած ազդեցության համառոտ քննություն: Ոչ լրիվ հինգ տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից երեք փուլերով (բաժանումը պայմանական է և կատարվել է մեր կողմից) գաղթեցին և այժմյան Շիրակի և Լոռու մարզերի տարածքում հաստատվեց ավելի քան 8700 ընտանիք:

Առաջին փուլում, որ ընդգրկեց XIX դ. առաջին քառորդը, ռուս-թուրքական սահմանն անցան ու Փամբակ-Շորագյալի ուղեմասում հաստատվեցին ավելի քան 3500 ընտանիք: Սա հնարավորություն տվեց նույն ժամանակահատվածում անընդմեջ շարունակվող պատերազմների, ավերածության, թալանի, սովի ու արտագաղթի պայմաններում հետ պահել ուղեմասը վերջնական ամայացումից:

Ներգաղթի երկրորդ փուլը կյանքի կոչվեց 1829 թ. սեպտեմբերի 2-ի՝ Ադրիանապոլսի ռուս-թուրքական պայմանագրով և շարունակվեց մինչև 1830-ական թվականների վերջերը: Մոտ մեկ տասնամյակ շարունակվող ներգաղթի արդյունքում (1829–1840 թթ.) Փամբակ-Շորագյալի ուղեմաս գաղթեց մոտ 5000 ընտանիք: Ի տարբերություն նախորդի, զանգվածային

[26] *ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, 83, 84, 85, 86, 87:*

այս գաղթերը հիմնովին վերականգնեցին ուղեմասի բնակչության ժողովրդագրական պատկերը՝ նպաստելով Արևելյան Հայաստանի հյուսիսային այդ հատվածում հայահավաքման գործընթացին: 1842 թ. «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի հաղորդած վիճակագրական տվյալների համաձայն՝ XIX դ. 30-ական թվականների վերջին ուղեմասն արդեն ուներ էթնիկակրոնական հետևյալ պատկերը. բնակչության ընդհանուր թիվը 1824–1825 թթ. 1465 ընտանիքի փոխարեն կազմեց 6353 ընտանիք, որից 1807-ը կամ 28,4 %-ը ապրում էր Ալեքսանդրապոլ քաղաքում, իսկ 4546-ը կամ 71,6 %-ը՝ գյուղերում: Կտրուկ փոխվեց ուղեմասի կոնֆեսիոնալ պատկերը: Եթե 1824-1825 թթ. հայերը կազմում էին ընդհանուր բնակչության թվի 74 %-ը, իսկ այլազգիները՝ 26 %, ապա գաղթերից հետո հայերի թիվը հասավ 95 %-ի, փոխարենը այլազգիներինը նվազեց մինչև 5 %: Ընդ որում, միատարրությամբ (հայաշատությամբ) ամբողջ ուղեմասում առանձնանում էին Շորագյալի տեղամասն ու Ալեքսանդրապոլ քաղաքը (վերջինս, չնայած իր նորաստեղծ լինելու հանգամանքին, ամենահայաշատ քաղաքներից մեկն էր Անդրկովկասում)[27]: Շորագյալի 2842 ընտանիքներից հայեր էին 2810-ը, այսինքն՝ տեղամասի գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 98,8 %-ը, մահմեդականներ՝ միայն 32 ընտանիք կամ 1,2 %-ը: 1807 ընտանիք ունեցող Ալեքսանդրապոլում հայեր էին բնակչության 95 %-ը, հույներ՝ 1,7 %-ը, իսկ մահմեդականներ՝ 3,3 %-ը: Այդ ցանկում թե՛ հայերի թվով և թե՛ մահմեդականների հետ ունեցած տոկոսային հարաբերությամբ երրորդն ու վերջինը Փամբակի տեղամասն էր: XIX դ. 30-ական թվականների վերջերին այստեղ ապրում էր 1704 ընտանիք, որից հայեր էին 1500 ընտանիք կամ 88 %-ը, իսկ այլազգիներ (գերազանցապես մահմեդականներ)՝ 204 ընտանիք կամ 12 %-ը[28]:

Ներգաղթի վերջին փուլն ընթացավ 1840-ական թվականներին, և ինչպես արդեն նշեցինք, նորաստեղծ Ալեքսանդրապոլի գավառ բերեց միայն 218 արևմտահայ ընտանիք: Այնինչ նույն ժամանակահատվածում բնական վերարտադրության, և հատկապես Ռուսաստանի ներքին նահանգներից սլավոնական տարրի վերաբնակեցման շնորհիվ բնակչության թիվը գավառում աճեց 1454 ընտանիքով՝ հասնելով 7807-ի (սրանցից 1984 ընտանիք կամ 25,4 %-ն ապրում էր գավառակենտրոն Ալեքսանդրապոլում, իսկ 5823 ընտանիք կամ 74,6 %-ը՝ գավառի 139 գյուղերում): Փաստորեն, արևմտահայության այս նոր գաղթը նախորդների համեմատ ունեցած իր համեստ ծավալների պատճառով գավառի կոնֆեսիոնալ պատկերի վրա այլևս դրական ազդեցություն ունենալ չկարողացավ: Ու թեև 1852 թ. անցկացված կամերալ ցուցակագրման համաձայն XIX դ. կեսին ևս հայերն Ալեքսանդրապոլի գավառի բնակչության ճնշող մեծամասնությունն էին

[27] *Հ. Ֆ. Պ. Լ. ի ն չ. Հայաստան. ուղևորություններ և ուսումնասիրություններ, հ. Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 61-62:*
[28] *ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, 83, 84, 85, 86, 87:*

(7119 ընտանիք), սակայն կազմում էին միայն 91,2 %-ը, իսկ այլազգիներ էին (պարսիկ, թաթար, ռուս, հույն, եզդի) արդեն բնակչության 8.8%-ը[29]*:*

АЛЕКСАНДРОПОЛЬСКИЙ УЕЗД В КОНТЕКСТЕ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПРОЦЕССОВ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (Первая половина XIX в.)

АРМЕН АЙРАПЕТЯН

Р е з ю м е

В первой половине XIX в. из разных пашалыков Западной Армении тремя этапами переселилось и обосновалось на территории нынешних областей Ширак и Лори около 8700 семей. Продолжавшаяся около пяти десятилетий иммиграция прежде всего дала возможность до первой половины XIX в. уберечь регион от окончательного опустошения, после чего, восстановив прежний армянский демографический образ населения северной части Восточной Армении, превратила новосозданный Александропольский уезд в очаг консолидации нации.

THE PROVINCE OF ALEXANDROPOL IN THE CONTEXT OF WESTERN ARMENIAN DEMOGRAPHIC PROCESSES (The first half of the 19th c.)

ARMEN HAYRAPETYAN

S u m m a r y

In the first half of the 19th century, approximately 8700 families from different pashalics of Western Armenia with three stages migrated and settled down in the territory of present Lori and Shirak regions. Immigration, having been continued for nearly five decades, first of all , gave opportunity to keep the region away from final desolation till the first half of the 19th century, and then it also restored the demographic picture of the population living in the northern segment of Eastern Armenia turning the newly-created Alexandropol province into a centre of consolidation of the nation.

[29] *ՀԱԱ, գ. 97, 109, 110 (Ալեքսանդրապոլ քաղաքում կամերալ ցուցակագրումն անցկացվել է 1848 թ., իսկ գավառի գյուղերում՝ 1850 թ.):*